ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի նոյեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի տասնմեկ ամիսների ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 27276.1 մլն դրամ՝ պլանավորված 27260.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 16.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 22.2 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 69 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 2 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 33 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 25.2 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 90 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 55-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 11-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և ապրանքների շրջանառության ու ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 4-ը՝ պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դուրսգրման գործընթացի և 9 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ավարտվել է 7 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 21.0 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 80 վարչական գործով սահմանվել է 1.1 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5223 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4565:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 44 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված

եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 106 վարձու աշխատողի՝ 14.4 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 31 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԼՂՀ կառավարության և Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքի, ««Լիցենզավորման մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին», «Հարկերի մասին», «Եկամտային հարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին» ու «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է «Հսկիչ կետերում հերթապահող անձնակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը», փոփոխություններ և լրացում կատարվել «Տնտեսավարող սուբյեկտների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքանյութական արժեքների հաշվառման», «Տնտեսավարող սուբյեկտների կողմից արտահանվող, ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքանյութական արժեքների հաշվառման» քարտերի ձևերում և «Նոր ստեղծված հարկ վճարողներին՝ օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգում»:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև համագործակցության ծրագրի շրջանակում 2016թ. նոյեմբերի 14-ից 16-ը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մասնագետների կողմից Արցախում կազմակերպվել են «Կամերալ ուսումնասիրությունների իրականացում» թեմայով ուսուցման դասընթացներ, իրականացվել փորձի փոխանակում վերլուծական աշխատանքների իրականացման բնագավառում:

Հաշվետու ամսում ֆինանսների նախարարի տեղակալը և օպերատիվ հետախուզության վարչության պետը գործուղվել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, հանդիպումներ ունեցել ղեկավար անձնակազմի հետ, քննարկել համագործակցության հետագա խորացման վերաբերյալ հարցեր:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել մեկ հայտարարություն:

2016 թվականի նոյեմբերի 7-ից 29-ը կազմակերպվել են «Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների լրացման և հանձնման ընթացակարգեր» թեմայով ուսուցողական սեմինարներ, որոնց շրջանակներում ԼՂՀ ֆինանսների նախարարության մասնագետների կողմից ուսուցումներ են անցկացվել այն հաշվապահների հետ, ովքեր դժվարանում են օգտվել հաշվետվությունների էլեկտրոնային համակարգից: Սեմինարների այս փուլին մասնակցել են թվով 342 հարկ վճարողների ներկայացուցիչներ:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 263 ելքագրվել՝ 114 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 11 գրություն: